

# ԲԵԼԻՆՍԿԻ-ՄՈԶԱԼՈՎ-ՀԱՍԼԵՏ ՀԱՐՑԸ ԵՒ ՀԱՅ ԹԱՏԵՐԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԸ (1840-1860ականներ)

ԲԱԽՏԻԱՐ ՑՈՎԱԿԻՄԵԱՆ

Հայ թատերագիտութեան մէջ ոչինչ այնքան շատ չի շօշափուել, ու չինչ այնքան մեծ արձագանդ չի ստացել, որքան՝ Պաւէլ Մոչալովի<sup>1</sup> եւ նրա Համլէտի դերակատարութեան մասին Վիսսարիոն Բելինսկու<sup>2</sup> գընահատութեան ուսումնասիրութիւնը: Լինելով խորապէս ստեղծագործական, տեսական ու գործնական բնոյթի հարց, նրանով հետաքրքրուել ու զրադուել են մի քանի սերունդներ: Ըստ որում, այս հարցի լուսարանութեանը մասնակցել են ինչպէս հայ բեմի ճանաչուած դերասաններ, այնպէս էլ գրական-քննադատական մտքի ներկայացուցիչներ:

Ահա համակողմանի ուսումնասիրութեան արժանի այս հարցն է, որ շուրջ մէկուկէս դար զրադեցրել է Հայ թատրոնի ցաւերով ու առաջնացով մտահոգուած բեմական-հասարակական գործիչների պրատող ու որոնող միտքը:

## 1

1888ին, երբ Մոսկովսկի նարշիւդատէ<sup>3</sup> ամսագրում լոյս տեսաւ Բելինսկու «Համլէտ», Դրամա Շեքսպիրի Մոչալովը Համլէտի Դերում» ծաւալուն ու հանգամանալից յօդուած-ուսումնասիրութիւնը, Մոսկուայի համալսարանի տարրեր բաժիններում սովորող հայ ուսանողները բաւականին թիւ էին կազմում: Նրանցից ոմանք (թերեւս մեծ մասը), հետաքրքրուել են տեղի թատերական կեանքով, յաճախել Մեծ (օպերային) եւ Փոքր (դրամատիկ) թատրոնները իսկ այդ տարիներին իրենց բեմական արուեստի փառքի գագաթնակէտին էին հասել ուսուական ոչալիստական թատերական արուեստի այնպիսի պայծառութիւններ, ինչպէս՝ Փոքր թատրոնի դերասաններ Միխայիլ Շչեպկինը<sup>4</sup> եւ Մոչալովը եւ ահա, այդ ուսանող երիտասարդների թւում եղել են այնպիսի մոլեռանդ թատերասէրներ, որոնք տեսնելով դեմոկրատական արտայալութիւն-

ների արտայայտիչ դերասան Մոչալովի խաղը տարբեր դերերում, հմայուած նրա դերասանական անզուգական տաղանդով ու ողբերգական շնչի փայլատակումներով, անհնարիչ, որ մեծ յափշտակութեամբ էլ կարդացած չինէին Համբէտի մանրամասն վերլուծութեան մասին թելինսկու յօդուածը:

19րդ դարի 30-40ականները Մոչալովի տաղանդի ծաղկման եւ վերջնական ձեւաւորման փայլուն շրջանն էր: Յատկապէս նրա շեքսպիրեան դերակատարումները, որոնցից մի քանիսը կատարել է երկրորդ անգամ՝ նոր թարգմանութիւններով, ցնցող տպաւորութիւն են թողել Հանդիսատեսների վրայ: Մոչալովի ելոյթների յաջողութեանը մեծապէս նպաստել են Նիկոլայ Պոլեւոյի<sup>5</sup> (Համբէտ) եւ Իւան Պանաևի (Օթելլօ)<sup>6</sup> բնագրերից կատարած թարգմանութիւնները, որոնց շնորհիւ բեմից վտարուել էին ուուսական թատրոնը հեղեղած Փրանսիական թարգմանութիւնները եւ, յատկապէս, Դիւսիսի<sup>7</sup> աղաւաղած փոխադրութիւններից կատարած թարգմանութիւնները: Մի հանգամանք, որն իր արտայայտութիւնն է գտել նաև Հայ թատրոնում, անցեալ դարի 80ականներին: Ուուսական նորագոյն թարգմանութիւնները, որոնք աւելի մօտ ու հարազատ էին բնագրին՝ հեղինակի մտքերը ճիշտ արտայայտելու պատճառաւ, Մոչալովին ազատ ստեղծագործելու լայն հնարաւորութիւններ են տուել: Եւ նա ստեղծագործել է, - ինչպէս նշել է Բելինսկին:

Իր մի շարք լաւագոյն դերակատարումներից յետոյ, 30-40ականներին, շեքսպիրեան դրամատուրգիալից Մոչալովը դերակատարել է՝ 1835ին Աթչարդ Ծրորորդ, 1837ի Յունուարին Համբէտ, իսկ Դեկտեմբերին՝ Օթելլօ, 1839ին՝ Արքայ Լիոն Գրեթէ ամէն թատերաշրջանում Մոչալովը հանդէս է եկել վերոյիշեալ դերերում: Ուրեմն, այդ տարիների ուսանող Հայ երիտասարդութիւնը լիուլի հնարաւորութիւն է ունեցել տեսնելու նրա խաղը տարբեր պիտիսների բնմադրութիւններում եւ սիրել ու գնահատել այնպէս, ինչպէս նրան սիրել է Մուսկուայի ողջ երիտասարդութիւնը եւ, առաջին հերթին՝ ուսանող երիտասարդութիւնը:

Իսկ որ Մուսկուայի համալսարանի Հայ ուսանողութիւնը տեսել է Մոչալովին բեմում, հիացել նրա բուռն խառնուածքով, ինքնարուխ տաղանդով կատարած դերերով՝ դա ճշմարտութիւն է: Մոչալովին բեմում տեսած ու նրա խաղին ծանօթ Հայ ուսանողներից յայտնի են նոր նախիջեւանցիներ Թէոդորոս Խատամեանը<sup>8</sup> եւ Սարգիս Տիգրանեանը<sup>9</sup>, որոնք յետագայում դարձան Հայ թատրոնի հիմնադիրներն ու թատրոնի պրոպագանդիստները նոր Նախիջեւանում, թիֆլիսեցի Գէորգ Ակսէրդ-

եանն<sup>10</sup> ու ղրիմեցի Սարգիս Յովհաննիսեանը<sup>11</sup>: Սրանց թուին պէտք է դասել նաեւ հեռաւոր Հնդկաստանից եկած Մկրտիչ Էմինին<sup>12</sup>, որպէս վերջիններիս սրտակից, անրաժան ու մտերիմ ընկեր, որը առնչուել է ժամանակակից ուուս զրականութեան հետ, թարգմանութիւններ է կատարել Պուշկինից՝ նրա կենդանութեան օրօք: Եթէ Լազարեան ճեմարանում սովորելու տարիներին նրանք հնարաւորութիւն էլ ունեցած չինէին, ապա, յամենայի դէպս, փաստ է, որ համալսարանական շրջանում, նրանք տեսել են Շչեպկինին եւ Մոչալովին: Բաւական չէ ասել՝ թէ տեսել են, Շչեպկինն ու Մոչալովը եղել են նրանց սիրած դերասանները: Ի՞նչից է զգացուում դա:

Նախ՝ նրանցից մէկի՝ Խատամեանի որդին՝ Յարութիւնը<sup>13</sup>, վերարտադրելով՝ հօր պատմածը, տուել է նրա այն խոստովանութիւնը, թէ ուսանողական տարիներին ինչպէս են տարուած եղել Շչեպկինին եւ Մոչալովի խաղով, եւ ինչպէս Տիգրանեանի հետ նրանց օրինակով ներկայացումներ են կազմակերպել նոր Նախիջեւանում: Իսկ համալսարանն աւարտելուց յետոյ՝ 1839ի Օգոստոսին Ախվերդեանը, վերադառնարով Թիֆլիս, աշխատանքի է անցել Նավթլուղի զինուորական հիւանդանուցում որպէս բուժակ: Մոսկովեան գեղարուեստական միջավայրից յանկարծ հիւանդանոցային մթնոլորտ, գործունէութեան լայն ասպարէջից նեղ, անշուլք պատեր՝ ընդամէնը քսանմէկ տարեկան մի խանդակառ, բայց միայնակ երիտասարդի համար չափազանց դժուար էր: Ինչ խօսք, տիրութիւնն ու կարօտն իրենց զգացնել են տուել: Եւ նա, իր այդ ձանձրոյթը մասամբ փարատելու համար նամակագրութեան մէջ է մտել ընկերների հետ:

1840ի սկզբներին, մի նամակով, Ախվերդեանը դիմել է Մոսկովայում մնացած իր համակուրսեցի Սարգիս Յովհաննիսեանին՝ պատմել Մոսկովայի նորութիւններից: Ախվերդեանի նամակը մեզ չի հասել, բայց պահպանուել է Յովհաննիսեանի պատասխանը, որը լիովին բացայացում է նրան յուզող հարցերի շրջանակներն ու բովանդակութիւնը:

1840ի Յուլիսի 25ի իր պատասխան նամակում՝ Յովհաննիսեանը գրել է. «Ի՞նչ նորութիւն կայ Մոսկովայում, հարցնում ես դու: Բացառապէս ոչինչ: Մոսկովան բոլորովին էլ այն չէ թատրոնը զրկուել է իր լաւագոյն սիրելիներից՝ Լաւրովից, Բանտիշենից, Մոչալովից» (ընդգծումը մերն է - թ. 8.): Հետաքրքրական է, որ իր այս նամակը Յովհաննիսեանն սկսել է ոչ թէ բուն նամակով, այլ՝ ուուս բանաստեղծ եւ դրամատուրգ Միխայիլ

Լերմոնտովի (1814-1841) թարգմանած «Օդեղէն Նաւ» բանաստեղծութեան արտագրութեամբ՝ միաժամանակ նշելով նրա աղջիկը՝ Օտեշխատվենիք Զապհակի ամսագրի 1840ի հինգերորդ համարը:

Մուկուայի այլեւս այն չլինելը շատ բան է ասում այդ իրականութեան հետ հայ ուսանողութեան ունեցած կապերի ու հետաքրքրութիւնների մասին։ Այդ են վկայում թէ՛ Թ. Խատամեանի եւ թէ՛ Յովհաննիսեանի յիշատակած անունները Յովհաննիսեանի նշած անուններից՝ Նիկոլայ Լաւրովը (1805-1840) եւ Ա. Բանտիշելը (1804-1860) եղել են Մեծ թատրոնի երգիչներ։ Թատերական կեանքի նրանցից զրկուելը պէտք է բացատրել առաջինի մահով, իսկ երկրորդի՝ Հաւանարար Պետերուրդ հիւրախաղերի գնալով։ Ինչ վերաբերում է Մոչալովից զրկուելուն, ապա դա վերաբերում է նրա հիւրախաղային շրջագայութեան դուրս գալուն։ 1840ի գարնանը նա գնացել է Տուլա, Վորոնէժ, Տամբով քաղաքները եւ միայն աշնան սկզբներին վերադարձել Մոսկուա։

Թ. Խատամեանի յիշողութիւնների, ինչպէս նաեւ Ախավերդեանի ու Յովհաննիսեանի նամակագրութեան մէջ յաւագոյն կերպով դրսեւորուել է Շչեպկինի եւ Մոչալովի նկատմամբ նրանց սիրոյ ու գնահատութեան վառ արտայայտութիւնը նրանց դերասանական աշխատանքում, ոչայիստական դերակատարումներում հայ երիտասարդները տեսել են կեանքի այն ճշմարտացի արտացոլումը, որը յատուկ ու բնորոշ է եղել ոռուսական ոչայիստական արուեստի սկզբնաւորողների խաղաղում եւ որը հայ թատերասէր երիտասարդները փոխանցել են հայ թատերական կեանք։ Ռուս ժամանակակից գրական ու թատերական գործիչների նկատմամբ ուսանող հայ երիտասարդութեան ցուցաբերած այս ըուռն հետաքրքրութիւնը ուշագրաւ վկայութիւն է դէպի ժամանակակից ոռուս գրականութիւնն ու թատերական արուեստը, նրա տաղանդաւոր ներկայացուցիչները եւ, մասնաւորապէս՝ դէպի Շչեպկինը, Մոչալովը, Պուշկինը եւ Լերմոնտովն ունեցած գնահատութեան, ինչպէս Մոսկուայում, այնպէս էլ նրա սահմաններից դուրս։

## 2

1848 թուականը իրադարձութիւններով հարուստ տարեթիւ է պատմահասարակական կեանքում։ Ցիշենք Փրանսիական յեղափոխութիւնը, Կարլ Մարքսի եւ Ֆրիդրիխ Էնգելսի Կոմունիստական Կուսակցութեան Մանիֆեստի առաջին հրատարակութիւնը Այդ նոյն թուականի գարնանը մեզանում առեղծուածայնօրէն անյայտացաւ հայ մեծ լուսաւորիչ-դեմոկրատ Խաչատուր Աբովյանը, ոռուսական իրականութեան մէջ կեանքից անժամանակ հեռացան Մոչալովը՝ Մարտին, իսկ Բելինսկին՝

**Մայիսին:** Դեմոկրատ դերասանի հմայքը մնաց նրա հանդիսատեսների ու աշակերտների իշղողութեան մէջ: Իսկ յեղափոխական-դեմոկրատ քննադատի ստեղծագործութեան վրայ դրուեց ցարական գրաքննութեան ժանր թամբ: Ստացուեց այնպէս, որ Մոչալովը մոռացուեց իր արուեստի հետ, իսկ Բելինսկին էլ մոռացութեան մատնուեց:

Այդ մոռացումից փրկելու համար անհրաժեշտ եղաւ, որ 1853ի Ղրիմի պատերազմը թուլացնէր ցարիկմի հիմքերը, որպէսզի եթէ ոչ բացայացտորէն, ապա գոնէ ակնարկութեամբ լիշտատակուէր մեծ քննադատի մասին:

Առաջինը, որը խիզախեց այդպիսի քայլ անել, Նիկոլայ Զերնիշեւսկին<sup>15</sup> էր: 1855-1856ին Սովորեմեննիկ<sup>16</sup> ամսագրում նա տպագրեց իր ակնարկները գոգոլեան շրջանի ուրս գրականութեան մասին: Այդտեղ նա ոչ միայն քօղարկուած ակնարկներով, այլև բացայալուրէն յիշտատակեց Բելինսկու անունը, գնահատութեան հօսք ասաց նրա գրական ժառանգութեան մասին: Ուրս գրականութեան դեմոկրատական թեւը ողջունեց Զերնիշեւսկու այդ համարձակ քայլ՝ Ակնարկների հրատարակութիւնը: Բելինսկու բարեկամ իւան Տուրգենեւն<sup>17</sup> այդ առիթով 1856ի Նոյեմբերին գրել է Լեւ Տոլստոյին: «Ես ուրախ եմ նրանց երեւան գալու հնարաւորութեան համար, ուրախ եմ Բելինսկու նասին գրուտ յիշութութիւնների համար, նրա յօդուածներից քաղուածքներ թերելու հնարաւորութեան համար, ուրախ եմ այն բանի համար, որ Վերջապէս յարգանքով է արտասանում այդ անունը»<sup>18</sup>:

Չնայած Բելինսկու «վերականգնման» համար արուող առանձին փորձերին, այնուամենայնիւ, նրա ստեղծագործութիւնները դեռևս մնում էին անյայութեան մէջ: Զէ՞ որ նրա բազմաթիւ գործեր լոյս էին տեսել կամ առանց ստորագրութեան, կամ էլ ծածկանուններով: Եւ, ինչպէս ժամանակին, իրաւացիորէն, Նիկոլայ Դորոլիխուրովն<sup>19</sup> է նշել, գրականագէտներից շատերը նոյնիսկ չեն իմացել, որ իրենք դաստիարակուել են Բելինսկու յօդուածներով:

Վերջապէս, 1859ից Մոսկուայում, գրահրատարակիչներ Կ. Սոլդատենկոյի եւ Ն. Շչեպկինի հրատարակութեամբ սկսուել է Բելինսկու երկերի տպագրութիւնը: 1859-1862ին լոյս է տեսել Բելինսկու երկերի ժողովածուն տասներկու հատորով, 12 հազար տպաքանակով: Առաջին հատորի երեւան գալուն պէս Մովսեմեննիկի 1859ի 4րդ համարում Դորոլիխուրովը մի ջերմ գրախօսական է գրել այդ հրատարակութիւնը հա-

մարելով ամենասուրախալի նորութիւնը Դա ոչ այնքան գրախօսական է, որքան մեծարման, գնահատութեան խօսք, որտեղ նա զրել է. «Ինչ էլ որ շպատակի ոռու գրականութեան հետ, ինչպիսի փարքամութեամբ էլ շզարգանայ այն, Բելինսկին միշտ կը լինի նրա հպարտութիւնը, նրա փառքը, նրա զարդը»<sup>20</sup>:

Ինչպէս Զերնիշեւսկու ակնարկները, այնպէս էլ Դորրովիւրովի յանձնարարական գրախօսականը իրենց տարածումն ու արձագանգն են գտել նաեւ Հայ իրականութեան մէջ: Բաւական է ասել, որ 1859ին, միայն Թիֆլիսում Սովորեմեննիկն ունեցել է 44 բաժանորդ: Գնալով, այդ թիւն աւելացել է, աճել՝ 1860ին դարձել 52, իսկ 1861ին՝ 55<sup>21</sup>:

Բելինսկու երկերը տարածուելով Ռուսաստանի զանազան վայրերը, հասել են նաեւ Անդրկովկաս, Թիֆլիս: Հենց 1859ից, Մոսկուալից, Պետերբուրգից, Կ. Պոլսից, Վենետիկից եւ այլ վայրերից Հայերէն, ուլուերէն, Փրանսերէն եւ այլ լեզուներով ստացուող գրականութեան հետ, ինֆիխանների գրախանութում վաճառքի են դրուել Բելինսկու երկերի առաջին եւ երկրորդ հատորները Հ. եւ Ա. ինֆիխանների գրախանութը սոսկ գրավաճառանոց չի եղել, այլ գրադարան, գրականութեամբ հետաքրքրուող մտաւորականների մշտական հաւաքատեղի, ուր նրանք ծանօթացել են նոր ստացուած գրականութեան հետ, կարդացել, քննարկել, մտքերի փոխանակութիւն կատարել: Այդ մտաւորականների թւում են եղել ժամանակի զարգացած եւ առաջադիմական Հայեացքների տէր, Հայ գրական-հասարակական մտքի զատմութեան մէջ անուն թողած թժէկ եւ բանասէր Գ. Ախվերդեանը, Կռուենկ Հայոց Աշխարհին ամսագրի խմբագիր եւ ռեժիսոր Մարկոս Աղաբեկեանը (1831-1908), գրող եւ թատերական գործիչ Պերճ Պոչշեանը (1837-1907), դերասան Միհրդատ Ամերիկեանը (1843-1879), գրականագէտ Գարեգին Մուրադեանը (Կետագայում՝ Մելքիսեդեկ արքեպիսկոպոս, 1838-1903), բանասէրներ եւ թատերական քննադատներ Գէորգ Տէր-Ալեքսանդրեանը<sup>22</sup>, Ալեքսանդր Երիցեանը<sup>23</sup> եւ շատ ուրիշներ:

Այս խմբի անդամներից առաջինը, որը թէեւ առանց ուղղակի ակնարկի, արձագանգել է Բելինսկու երկերի հրատարակութեանը, եղել է Տէր-Ալեքսանդրեանը Մանօթանալով Բելինսկու գործերին, իւրացնելով նրա առաջաւոր զաղափարները, Տէր-Ալեքսանդրեանը 1859ի Մեպտեմբերին Մեղու Հայաստանի թերթում տպագրել է «Բանք ինչ Զկրիտիկայէ» յօդուածը: Յօդուածագիրն այդտեղ խօսելով քննադատու-

թեան, քննադատի դերի ու կոչումի մասին, յաճախակի դիմել է Բելինսկու ընորոշումներին, սակայն առանց նշելու նրա անունն ու օգտագործած գրականութեան աղբիւրը թէեւ Տէր-Ալեքսանդրեանը հնարաւորութիւն չի ունեցել բացայատօրէն յիշատակելու թելինսկու անունը, բայց նրա յօդուածում ակնյայտ է, որ օգտուել է մեծ քննադատի երկերի առաջին հատորում տպագրուած «О Kritike I Literaturnikh Mneniakh "Moskovskogo Nabludatelja» յօդուածոյց<sup>24</sup>:

Բելինսկու երկերի մուտքն Անդրկովկաս հակայական ազդեցութիւն է ունեցել տեղի մտաւոր կեանքի գարգացման վրայ. Դա ակնյայտօրէն նկատուել է հայ իրականութեան մէջ եւ, առաջին հերթին՝ թատերական կեանքում:

1860ին, Թիֆլիսի Ներսիսեան դպրոցի դասատուներ, դրամատուրգներ Յակոպ Կարինեանի<sup>25</sup> եւ Միքայէլ Պատկանեանի<sup>26</sup> միջեւ դրամատուրգիայի չուրջ ծագած սկզբունքային բանավէճի ժամանակ, վերջինս, ուշալիստական դրամատուրգիայի տեսութեան մասին իր հայեացքները հիմնաւորելու համար դիմել է Բելինսկու մտքերին եւ Գրիգորյովովի օրինակին: Ճորտատիրական իրաւունքի վերացմանը (1861) նախորդող ամիսներին, Պատկանեանն արդէն կարողացել է որոշակիօրէն տալ Բելինսկու անունը եւ ազատ կերպով օգտուել նրա գործերից: Այսպէս որ, թատրոնի, դրամատուրգիայի եւ քննադատութեան հարցերը պարզաբանելու համար նա իր ձեռքի տակ ունեցել է Բելինսկու երկերի 1859ին լոյս տեսած առաջին եւ երկրորդ հատորները: Դրանցից նա բաւականաչափ քաղուածքներ է արել՝ երբեմն անուղղակի, երբեմն էլ բառացիօրէն թարգմանելով իրեն անհրաժեշտ տողերը՝ նշելով համապատասխան հատորն ու էջը<sup>27</sup>: Պատկանեանն իր յօդուածը գրելիս կարդացած է եղել նաեւ Բելինսկու մասին Զերնիշեսկու՝ Սովորեմեննիկում տպագրած «Ակնարկներ»ը:

Եւ այսպէս, տարեցտարի, Բելինսկու երկերը հատոր առ հատոր լոյս տեսնելուն եւ Անդրկովկաս հասնելուն պէս, հայ իրականութեան մէջ ընդլայնուել են նրա գրական ժառանգութեամբ հետաքրքրութիւն ցուցաբերող մտաւորականների շրջանակները: Առանձնապէս լայն է եղել գրականութեան եւ արուեստի հարցերով հետաքրքրուողների թիւը: Դա մեծապէս նպաստել է հայ գեղագիտական մտքի զարգացմանը: Այսպէս, օրինակ, 1861-1862ին մանկավարժ Բարսեղ Աթամանեանը<sup>28</sup>, որը աւարտել էր Հազարեան ճեմարանը, Կռունկ Հայոց Աշխարհին ամսագրում

տպագրել է «Բանաստեղծութեան Վրայց վերնագրով յօդուածաշարքը, որը ոչ այլ ինչ է, եթէ ոչ Բելինսկու՝ Հերմոնտովի՛ Բանաստեղծութիւնը եւ Գրիբոյէդովի՝ Խելքից Պատուհան պիէսի մասին գրած յօդուածների տարրեր մասերի միացումի ազատ թարգմանութիւնը Բելինսկուց օգտուելով Հանդերձ, Աթամանեանն իր մտքերը շարադրելիս ոչ միայն չի թաքցրել սկզբնաղիւրը, այլև տողատակի ծանօթութեան մէջ նշել է. «Այս յօդուածս հաներ եմ ուսւաց «Պելինսկի» ասուած առաջի թննիշն, որ երրոպացուց մէջ ալ անուն ունի»<sup>39</sup> (Ծնդգծումը մերն է - Բ.Ց.):

1863ին Մեջու Հայաստանի թերթում տպագրած յօդուածներում եւ 1865ին Թիֆլիսում լոյս ընծայած Պատմութիւն Հայոց Գրականութեան դրքում, Ստեփանոս Պալասանեանը (1837-1889) բաւականին հանգամանորէն անդրադարձել է գրականութեան տեսութեան, պատմա-փիլիսոփայական ու սոցիոլոգիական հարցերին, որոշակիորէն օգտագործելով Բելինսկու մտքերն ու տեսակէտները Նա Բելինսկու հայեացքների որոշ դրսեւորումն է նկատել նաեւ մանկավարժութեան ընագաւառում<sup>40</sup>: Այս բոլորն իրենց հերթին նպաստելով Հայ Հասարակական մտքի պատմութեան տարրեր ընագաւառուների զարգացմանն ու առաջադիմութեանը, խոշոր չափով նպաստել են նաեւ թատերական կեանքի աշխուժացմանը:

Հայ պրոՓեսիոնալ թատրոնի զարգացման առաջին քայլերից, Բելինսկու քննադատական յօդուածների լոյսի տակ պարզաբանուել են թատրոնի, դրամատուրգիայի եւ թատերական քննադատութեան հարցերը: Թատերական կեանքում նորի, առաջադիմականի համար մղուած պայքարում առանձնապէս ժխտուել է ազգային անարժէք պատմական ողբերգութիւնների նշանակութիւնը եւ առաջ քաշուել արդիական կեանքն արտացոլող կատակերգութիւնների անհրաժեշտութիւնը: Այս պայքարի ակտիւ գործիչներից էին ժամանակի անուանի դերասաններ Գէորգ Զմշկեանը, Միհրդատ Ամերիկեանը, Սեղրաք Մանդինեանը, Արտաշէս Սուքիասեանը՝ բոլորն էլ<sup>41</sup> լաւ ծանօթ Բելինսկու գրական ու թատերական հայեացքներին, նրա սկզբունքներով առաջնորդուող:

Չնայած Բելինսկու եւ նրա երկերի նկատմամբ ցուցաբերուած բազմակողմանի հետաքրքրութեանը, այնուամենայնիւ, դեռեւ չշօշափուած էր մնում մի ընագաւառ: Մինչդեռ դա այնքան ու էապէս անհրաժեշտ էր: Դա դերասանական արուեստի, դերասանի վարպետութեան ու գնահատութեան՝ նոր թատրոնի զարգացման համար չափազանց անհրաժեշտ ընագաւառն էր:

Դերասանի վարպետութեան, նրա արուեստի առանձնայատկութեան մասին առաջին անգամ արտայայտուել է դերասան Միհրդատ Ամերիկեանը: Նա Գմշկեանի հետ պրոֆեսիոնալ դերասանական արուեստի ոչ-ալիստական ուղղութեան հիմնադիրներից մէկն է հայ թատրոնում: Խորն ըմբռնելով դերասանի դերը թատրոնի զարգացման ու առաջընթացի գործում, նա իր ներքին զգացողութեամբ ու առողջ բանականութեամբ, ինքնուրոյն ճանապարհով հասել է բեմական ոչալիզմին:

Իրենց բեմական կեանքի առաջին տարիներից հիմք ունենալով ոչալիստական արուեստի սկզբունքները, թէ՛ Գմշկեանը եւ թէ՛ Ամերիկեանը, ինչքան էլ որ ծանր ապրումներ ունեցան դերասանի իրենց անապահով կեանքում, նրանք չիջան բեմական ոչալիզմի այն բարձունքից, որին հասել էին աշխատասիրութամբ, ստեղծագործական ճանապարհին: Աւելին, նրանք իրենց ստեղծածը, ձեռք բերածը հաստատեցին ու ամրապնդեցին Բելինսկու Հայեացքների ստեղծագործական, նպատակասլաց օգտագործման եղանակով:

Ի՞նչ կարծիք է ունեցել Ամերիկեանը եւ կամ որո՞նք են եղել նրա հայեացքները դերասանի, դերասանական արուեստի մասին. ի՞նչ առիթով է նա անդրադարձել Բելինսկու կարծիքներին ու Մոչալովի խաղին:

Կատակերգական ու ողբերգական անզուգական դերակատարումներով հոչակուած, տաղանդաւոր ոչալիստ դերասան Ամերիկեանն օժտուած է եղել նաև գրական տուեալներով՝ գրել է բանաստեղծութիւններ ու յօդուածներ, թարգմանութիւններ է կատարել Զաքում ստորագրութեամբ: Իրրեւ հմուտ Փելիխտոնիստ աչքի է ընկել Մշակի սկզբնական շրջանում: Ահա, լրագրական ստեղծագործական ունակութիւններն էլ նրան հնարաւորութիւն են տուել դերասանի եւ դրամատուրգի, նրանց՝ մէկը միևսին փոխադարձարար լրացնելու մասին իր հայեացքները դրսեւորելու արտայայտութեան ուղիներ գտնելու: Նա կարող էր առանց յատուկ առիթի սպասելու էլ գրել, որովհետեւ հարցը վաղուց էր հասունացել նրա մօտ: Բայց այդ բոլորը նա ցանկացել է յատուկ նպատակի ծառայեցնել, ուրիշ ժողովուրդների արուեստի հետ համեմատականներ կատարելու միջոցով: Այլապէս, առանց համեմատականի ու ապացուցների, նրա ասածը ինչ որ չափով կը լինէր Մ. Պատկանեանի մտքերի կրկնութիւնը, այն էլ բաւականին ուշացումով: Եւ ահա, նա գտել է մատուցման իր ուրոյն ձեւը՝ անդրադառնալու Մոչալովի դերասանական արուեստին ու Բելինսկու գնահատութեանը:

1866ի Փետրուարին Մեղու Հայաստանի թերթում Ամերիկեանը տպագրել է «Հէլինէր նամակները Ֆրանսիական թատրոնի Մասին»

նամականին<sup>32</sup>: Դա Հայնրիխ Հայնէի<sup>33</sup>, իր մտերիմ, գրող եւ թատերական գործիչ Աւգուստ Լեւալդին (1792-1871) գրած տասը նամակից առաջնն է, գրուած 1837ի Մայիսին, որոնք բոլորը միասին կազմում են մի գեղարուեստական նամականի: Իր այդ թարգմանութիւնը Ամերիկեանը կատարել է Հայնէի երկերի՝ Պիոտր Վէյնբերգի<sup>34</sup> հրատարակութիւնից:

Թէ եւ արտաքինից կարելի է կարծել, որ այդ նամակի թարգմանութիւնն ու տպագրութիւնը ոչ մի կապ չունի ո՛չ ոռուս, ո՛չ էլ՝ առաւել եւս հայ թատրոնի հետ, բայց այդ կապը կար Դայնուգող հարցերի ընդհանութիւնն է, որ գոյութիւն է ունեցել ինչպէս ոռուս եւ եւրոպական, այնպէս էլ հայ թատերական կեանքում:

Նամականու այս ձեւի օգտագործումն Ամերիկեանը դարձել է այն յարմար միջոցը, որով նա սկզբունքային բանավէճ է սկսել գերասանի ստեղծագործական արուեստի մասին: Նա ոչ թէ սովորական թարգմանութիւն է կատարել, որն ինքնին հետաքրքիր երեւոյթ է 19րդ դարի 80ականների թատերական կեանքում, այլ դրանով նա առիթ է գտել բացայայտելու դերասանի վարպետութեան մասին իր ըմբռունմերը: Եւ նա, իր այդ հասկացութիւնների հաւաստիութիւնն ապացուցել է Մուշալովի եւ Բելինսկով օրինակներով:

Ամերիկեանն ընտրել է յատկապէս այնպիսի նամակ, որը որոշակիորէն կարող էր յատկապութիւն մտցնել վիճարանութեան առարկայ դարձած՝ թոյլ պիէսի եւ ուժեղ դերասանի ու հակառակը տեսութեան մէջ: Այս հարցերի մասին իր հայեացքներն արտայայտելու համար, նամակի համապատասխան տեղերում, նա արել է ընդարձակ ծանօթագրութիւններ ու մեկնարանութիւններ, որոնք աւելի են յուզել հայ դերասանին, նրա ստեղծագործող մտքին ու սրտին, քան բուն նամակը կարող էր երբեւէ հետաքրքրել:

Տպագրուած առաջին նամակից բացի, Ամերիկեանը խոստացել է միւս նամակների թարգմանութեամբ էլ բաւականութիւն պատճառել ընթերցողներին, բայց, հաւանարար, իրենից անկախ պատճառներով, այդ բանը չի կատարուել: Դա պէտք է հետեւեալ կերպ բացատրել: ա՝ որ Ամերիկեանն իր մտքերն արտայայտած լինելով հասել է իր նպատակին եւ ը՝ (որ աւելի հաւանական է), թերթի խմբագրութիւնը չկամենալով վէճին սուր բնոյթ տալ, մանաւանդ որ վիճարանող միւս կողմն իր աշխատակիցն էր, դադարեցրել է Հայնէի նամակների թարգմանութեան տպագրութիւնը:

Հայնէի նամակի տպագրութեան առիթով դերասանական արուեստի մասին ստեղծագործական վէճի մէջ թէեւ խմբագրութեան համակրութիւնն Ամերիկեանի կողմն է եղել, բայց, կարծում ենք, որ վերջին հանգամանքն աւելի մեծ դեր է խաղացել: Զէ՞ որ Ամերիկեանը քննադատել է թերթի աշխատակից Ալեքսանդր Երիցեանի հայեացքները դերասանի վարպետութեան մասին: Այսպէս թէ այնպէս, Ամերիկեանը պատրաստ է եղել օրինակներով պատասխանել ըոլոր նրանց, ովքեր կը փորձէին առարկել իրեն:

Առաջին ծանօթագրութեան մէջ Ամերիկեանն ընթերցողներին ծանօթացրել է Հայնէի կենսագրութեանը՝ կեանքին ու ստեղծագործութեանը: Զգացրում է, որ Հայնէի մասին խօսելիս, Ամերիկեանն օգտուել է Վէյնբերգի հրատարակութիւնից:

Լեւալդին գրած իր, տուեալ դէպքում Ամերիկեանին եւ մեզ հետաքրքրող նամակում, գերմանացի դրամատուրգ Շոնեստ Ռաուպախի (1784-1852) պէէսների բևմադրութիւնների մասին խօսելիս, Հայնէն այն կարծիքն է յայտնել, թէ «չի կարելի որոշել, թէ ով ումն է ի մահ դատապարտում, արդեօք հեղինակը դերասանին, թէ ներասանը հեղինակին»:

Հենց այս միտքն է րունել Ամերիկեանը եւ դրա շուրջը դրսեւորել իր հայեացքները դերասանի վարպետութեան հարցերի մասին: Առիթը ծառայցնելով, նա դրել է.

«Անցեալ տարիներում մեր հայերս մէջ էլ այդ խնդիրը մի քանի պարապ մարդկանց խօսակցութեան առարկայ դառաւ: Պ. Երիցեանը մի ֆելիետոնիստի անուամբ ամենավճռական կերպով պահանջում էր, որ ինչենիցէ պիտսա, ինչ տեսակ էլ որ գրուած լինի, պէտք է միօրինակ գերազանց ներկայացնել: Բայց մենք ասում ենք, որ այնպիսի գրուածները, ինչախակը են, «տրագետիա» անուանեալ մեր անհամ խելկատակորինըը «Աղասի Բեգ» հեղ. Պոշեանցի, «Արշակ Թագաւոր» հեղ. Խորեն վարդապետի, «Արուսեակ» կամ «Լոռուայ Զորումը Դուէլ» հեղինակութիւն ֆելիետոնիստ Երիցեանի եւ այլն, եւ այլն սորա նման քարոզաւետքերը, էլ ինչ ասել կուզի որ դերասանին փոխանակ օգնելու ճշմարիտ մարդկային զգացմամբ, ընդհակառակը, հրեշացնում եւ կոպտացնում են նրա թէ սիրոտ եւ թէ հոգին: Այսպիսի Չտրագեղիաների վրա հարկաւոր է արդարեւ մի տրագետիա գրել:

Ֆելիետոնիստը պահանջում էր հայ ներասաննիցը «Սանդուխտ»ի եւ «Արուսեակ»ի դերերում այն միեւնոյն բաւականութիւնն ունենալ, ինչ որ Բելինսկին ոգեւորուած Մոչարլիկին էր ստանում: Եթէ հիմա էլ այդ յոյսի վրայ է, ուղեմն թող սպասի, որ գարունը գայ ու սրտի անհամբերութիւնը եւ ծանձրութիւնը կանաչ խոտի վրայ ման գալով անց-

կացնել, մինչեւ որ բնութիւնը խղճալով մի այդպիսի դերասան պարզեւէ մեր ազգին»:

Անկախ իր այս բոլոր ճշմարտացի պահանջներից, շտապենք յայտնել, որ, ըստ Ամերիկեանի, նոյնիսկ այդ անարիւն դերերի կատարման համար էլ անհրաժեշտ է ունենալ բաւարար չափի տուեալներով օժտուած դերասան։ որ բնութիւն պարզեւած այդպիսի դերասանն էլ անկարող կը լինի շունչ ու կենդանութիւն տալ այն դերերին, որոնք հեղինակների կողմից տրուած են չոր ու անարիւն։ Այս տեսակէտից նա չի լինայել նոյնիսկ իր դարձնկեր եւ արուեստակից-թատերական գործիչ Պոչշեանին, որն Արովեանի Վէրք Հայաստանի Հայրենասիրական վէպը վեր էր ածել «Աղասի» անունով պիէսի։ Վէպում այնքան ջերմ սիրով տրուած կենդանի հերոսները պիէսում դարձել են ձայնափողեր։ Եւ եթէ որոշ տարիներ այն մնաց Հայթատրոնի խաղացանկում, ապա՝ շնորհիւ իր Հայրենասիրական գաղափարների, բայց ոչ՝ գեղարուեստական որակի։

Այսուամենային, ո՞րն էր Ամերիկեանի տեսակէտը ստեղծագործող դերասանի մասին։ «Դերասանին այն ժամանակը չեն հաւանում, - զրել է նա, - երբ որ նորա ներկայացրած խաղը անհաւատարիմ է մնում գրուածքի մտքի հետ։ Բայց ինչ անի այն ժամանակը նա, երբ որ ինքը գրուածքը անհաւատարիմ է մարդկային խևկական կեանքին։ Այսպիսի դէպքերում, իհարկէ, որ հեղինակներն են աւելի ի մահ դատապարտում դերասանաց, քան թէ սորա նրանց»։

Շարունակելով իր բանավէճը, Ամերիկեանը գրել է. «Նելինտոնիստ Երիցեանը մի ուրիշ խելօք քան է էր պահանջում, որի վերայ հիմի էլ մեր ծիծառը չենք կարողանում բռնել։ «Չինի թէ «Ծերսափիր»ի կամ ուրիշ մի լաւ հեղինակի գրուածքին դիմէք, - ասում է նա, - այդ Եր կողմիցը տգիտութեան նշան է»։ -Սխալում է ա. Երիցեանը։ Մի լաւ եւ մի վատ գրուած հենց մի շատ վատ դերասան, մի՞թէ միատեսակ կը ներկայացնե։ Զէ՞ որ լայի մէջ գոնեայ մին փոքր շնորհը ցոյց կը տայ, իսկ վասի մէջ բոլորովին ոչինչ»։

Դերասանի վարպետութեան, ստեղծագործական աշխատանքի մասին իր ասելիքն աւարտելուց յետոյ, Ամերիկեանն անդրադարձել է նրա կոչումին, այս անգամ՝ Բելինսկուց թարգմանելով հետեւեալը։ «Դերասանը մի արիեստարու է։ Ուղիղ է ինչպէս ուրիշը՝ այնպէս էլ իմքը կարող է զգացմամբ ստեղծել ազատարար մի որեւիցէ քան։ Բայց միեւնոյն ժամանակը նա անհրաժեշտ կախումն ունի եւ դրամատիկական քանաստեղից։ Այդ ազատամտութիւնը եւ այդ կախումը կապուած են մէկզմէկու հետ անքաժան, եւ միայն այս երկուսի միաւորութեան ժամանակը դերասանը կարող է լինել մնե։ Դրամատիկական

բանաստեղծը յայտնում է մի ճշմարտութիւն, այսինքն նա գտնում է այն՝ ինչ որ կայ. բայց ինչ որ ինձ ու քեզ յայտնի չէ, որին իմանում ենք մենք դերասանի միջնորդութեամբ: Եւ իրաքանչիւր նրա մի ձեւը, մի պատկերը, բանաստեղծի գտած ճշմարտութեան արտայայտութիւնն է»:

**Այս, ինչպէս եւ Բելինսկուց բերած միւս հատուածները Ամերիկեանը քաղել է Մոչալովի՝ Համլէտի մասին գրած յօդուածից<sup>38</sup>:**

Բնագրի եւ նրա ազատարար թարգմանութեան այս օրինակից տեսնում ենք, որ ընդհանուր առմամբ ընդունելով Բելինսկու ընորոշումը, Ամերիկեանը միաժամանակ ցուցաբերել է իր սեփական վերաբերմունքը: Դա, ամէնից առաջ, վերաբերում է դերասանի դերին՝ թատրոնում: Ընդունելով, որ կեանքում եղած ճշմարտութեան արտացոլումը զրամատուրգի ստեղծագործութիւնն է, Ամերիկեանը միաժամանակ հարց է բարձրացնում, իսկ ո՞վ է արտայայտում նրա հերոսների հոգերանութիւնը, միմեանց նկատմամբ վերաբերմունքը, այսինքն այն ինչ ինձ ու քեզ յայտնի չէ, բայց այդ ոչ յայտնին մենք իմանում ենք դերասանի միջնորդութեամբ ու նրա չնորհիւ:

Ճիշտ է, սրա զուգահեռը կայ Բելինսկու մօտ. «Հեղինակին հասկանալու համար անհրաժեշտ է միտք եւ զեղագիտական զգացողութիւն, հեղինակին ըմբռնումով գործողութեան մէջ դնելու հանճար»<sup>39</sup>: Այսուամենայիւ, եթէ ըստ Բելինսկու՝ հեղինակի մտքերը ճշմարտացի հաղորդելու համար դերասանը պէտք է լինէր տաղանդաւոր, հանճարեղ, ապա Ամերիկեանի մօտ այդ բոլորը պէտք է պարզուէր ոչ թէ ապաշնորհ, այլ անպայման օժտուած «դերասանի միջնորդութեամբ»: Վերջին հաշուով, ինչպէս տեսնում ենք, երկուսի մօտ էլ լուծումը նոյնն է, իսկ մօտեցումը՝ ինքնուրոյն:

Աւարտելով պիէսի, դրամատուրգի եւ դերասանի փոխըմբռնման ու փոխադարձ լրացման մասին իր միտքը, Ամերիկեանն այս անգամ ուղղակիորէն բերել է Բելինսկու հետեւեալ խօսքերը: «Որքան որ բարձր է հեղինակը, կամ բանաստեղծը,- ասում է Բելինսկին,- այնքան էլ աւելի մեծ, աւելի զգայուն եւ աւելի եռանդուն պէտք է լինի դերասանը՝ խաղալով նրա ստեղծած դերը: Որքան որ պարզ է հասկացել հեղինակը ճշմարտութիւնը, այնքան էլ պարզ կ'երևայ նրա միջի թափանցուողը, հետեւարար եւ այնքան վառ պէտք է լինի նրա ոգետրութիւնը»: Կոպին ընդունելով ոռւս մեծ քննադատի սկզբունքը, նա բացականչել է: «Չըն-

դրւնել ա՛. Բելինսկու այս կարծիքը, կը նշանակէ քողնել ճշմարտութիւնը եւ միայն ցնորդների հաւատալու:

Իւրացրած լինելով Բելինսկու գեղագիտական հայեացքները, Ամերիկանն իր դերասանական գործունէութեան առօրեայում առաջնորդուել է այդ սկզբունքներով։ Դրա լաւագոյն ապացոյցը Կարապետ Զամբախովի անզուզական դերակատարութիւնն է Գարրիչէ Սունդուկեանի նոր գրած Խամբարայա կատակերգութեան մէջ։ Զմշկեանի մարմնաւրած Պէպոյի (Սունդուկեանի Պէպօ կատակերգութեան մէջ) հետ Ամերիկեանի Զամբախովը 19րդ դարի 60-70ականներին ստեղծուած հայ դերասանական արուեստի անհաս կոթողներ են, որ մնայուն հետք են թողել հայ թատրոնի պատմութեան մէջ։

Լինելով խորապէս ոէայիստ դերասան, լաւ ճանաչելով կենցաղը, հասարակական կեանքն ու մարդկային փոխյարարերութիւնները, Ամերիկեանը եղել է ժամանակի հասկացութիւնների վարպետ մեկնարանը բեմում։ Որպէս ժամանակի հարազատ ծնունդ, լիովին ըմբռուելով հեղինակի պատկերած կեանքն ու իր հերոսի ներքին աշխարհը, դերասանն ստեղծել է ժամանակակից մարդու՝ առեւտրական կապիտալի նախնական կուտակման խաւի ներկայացուցիչ Զամբախովի կենդանի, հիւթեղ, գունագեղ կերպարը։ մի վաշխառուի, որն իր հարազատ աղջկայ բարոյական սպանութեան առեւտրով է զրայուել նաեւ։ Այդ Զամբախովն է, որը չորս տասնամեակ յետոյ Շիրվանզադէի մօտ դարձաւ էլիզարով<sup>38</sup>։ Անկախ ժամանակից ու վարուելակերպից, հարստանալու րուռն մոլուցը բռնուած այս մարդկանց գործելակերպը նոյնն է՝ կեղծել, խարբել՝ կանգ չառնելով անգամ զոհաբերութեան առաջ, եթէ դիմացինը նոյնիսկ հարազատ աղջիկն է։ Երկու դէպքում էլ՝ կապիտալի կուտակման թէ՛ նախնական եւ թէ՛ զարգացման էտապներում զոհ են դառնում մարգարիտի պէս մարդկային հարստութիւնները՝ իրենց բարոյական վեհութեամբ Մարգրիտն ու Մարգարիտը<sup>39</sup>։ Այս իմաստով ո՛չ Սունդուկեանը, ո՛չ էլ Շիրվանզադէն պատահականօրէն չեն ընտրել իրենց հերոսուհիների անունը՝ Մարգարիտ։

Որ Ամերիկեանի Զամբախովը գեղարուեստական կատարեալ ստեղծագործութիւն է եղել, դերասանի վարպետութեան, նրա բեմական ընդունակութիւնների բազմակողմանի դրսեւորման լաւագոյն արտայայտութիւն, բաւական է յիշատակել թէկուզ այն փաստը, որ Զամբախովի դերի համար նրա կատարած տեքստային միջամտութիւնն ընդունել է Սունդուկեանի պէս անհանդիստ ու պահանջկոտ դրամատուրգը։ Սա

արդէն, ինքնին, մի ուշագրաւ վկայութիւն է այն մասին, թէ դերասանը որքան խոր է թափանցել հեղինակի ստեղծած կերպարի չութեան մէջ, որքան հարազատ ու ցցուն է ներկայացրել իր մարմնաւորած հերոսին, որ Սունդուկեանը ոչ միայն համաձայնել է նրա կատարած լրացմանը, այլեւ այդ բանը նշել է յատուկ ծանօթութեամբ: Խօսքը վերաբերում է հետեւեալին:

Խաթարայացի առաջին արարուածի առաջին տեսարանի Զ. տեսիլում Զամրախովն ասում է:

- Ախար իմ Մարքրիտին ով կու հաւճի:

Այս նախաղասութեան առնչութեամբ Սունդուկեանը գրել է. «Այս տեղ հանգուցեալ Ամերիկեանը աւելացրել է միշտ այս խօսքերը՝ «Թէ ինձ իր տեսի, թէ իմ Մարդուտին»: Ի դէպ է ասել, որ Սունդուկեանն իր Խաթարայա կատակերգութիւնը նույիրել է Միհրդատ Ամերիկեանի յիշատակին:

Այստեղ է, որ համընկել է նրանց մտածողութիւնը, ամրապնդուել դրամատուրգի եւ դերասանի միջեւ ստեղծուած փոխըմբռւումը Այդպէս կարող էին վարուել դերասանին լիարժէք կերպար տուած դրամատուրգը եւ հեղինակին լիովին ըմբռոնած դերասանը Դերասանի եւ դրամատուրգի փոխադարձ լրացման սրանից աւելի խօսուն օրինակ, դժուար թէ լինի:

Զամրախովի դերակատարման մէջ Ամերիկեանի ունեցած յաջողութիւնն արժէ բացատրել դերասանին տուած թելինսկու հետեւեալ բնութագրութեամբ, «Ներասանը ... ապրում է այն անձի կեանքով, որին ներկայացնում է: Նրա համար գոյութիւն ունի ոչ թէ ամբողջ դրամայի գաղափարը, այլ մի անձի գաղափարը. եւ նա, օրեկտիօրէն հասկանալով այդ անձի գաղափարը, այն կատարում է սուրեկտիօրէն: Ստանձնելով դերը, նա այլևս ինքը չէ, նա ել իր կեանքով չի ապրում, այլ իրեն կողմից ներկայացուող անձի կեանքով. նա տառապում է նրա տառապանքներով, որպահանում է նրա որախութիւններով, սիրում նրա սիրով. միս բոլոր անձինք, որոնք խաղում են նրա հետ, այդ վայրկեանին դառնում են նրա բարեկամները կամ նրա թշնամինները՝ նայած իրաքանչիւրի դերի յատկութեանը: Եւ, աստուած իմ, որքան միջոցներ են պահանջում բնմական ընդունակութիւնները»<sup>40</sup>:

Երրորդ հարցը, որի մասին ծանօթագրութեամբ արտայայտուել է Ամերիկեանը, հետեւեալն է: Հայնէն իր նամակում գրել է թէ՝ «Կոյրերի տերութեան մէջ մի աչք ունեցողն ել քագաւոր է: Խսկ մեր անախտան կոմիկական հեղինակների մէջ Ռապուախն ել լաւ է»: Անպիտան կոմի-

կական հեղինակներ ասելով. Հայնէն նկատի է ունեցել այն դրամատուրգներին, որոնք կոմեդիա անուան տակ իրենց պիէսներում ներկայացրել են հայրերի, մայրերի, չարագործների, պալատական խորհրդականների, սիրածների, սիրուհիների եւ սրանց նման այլ՝ սովորական դիմակների:

Հայնէի այս բնորոշումն էլ Ամերիկեանն առիթ է ծառայեցրել արտայայտելու իր կարծիքները ժամանակակից՝ նմանօրինակ հայ դրամատուրգիայի մասին: Եւ նա, առանց վրդովմունքը թաքցնելու, գրել է. «Մեր քոռ բայստից մեզանում էլ տարածուել է այդ չուման: Մեզանում էլ բանուել են հեղինակներ, որոնք բեմի վրայ դուրս են ցցում Հասան-Հուսե-Մուսա-խաներ (նկատի ունի Պոչշեանի Աղասի Բէզը - Բ.Յ.) Արշակներ, Հայաստան (Խ. Գալֆայեանի Արշակ Երկրորդը - Բ.Յ.) ...դժողոր...կայծակ...դժողոր...կատաղիր...ցնորում եմ...ծով...գետին ...հրեշտակ...սատանայ... (Երիցեանի Արուսեակը - Բ.Յ.)...Հայրենիք...Անի...Ալի (Աղասի Բէզ - Բ.Յ.) ... եւ այն սրանց նման բաներ: Այն անձինքները, որոնք կարծում են թէ այսպիսի աւաղ ու քարեների ովկիանոսումը իրանք դրամատիկական հեղինակներ են, բող ներեն մեզ, որ ճշմարտութիւնը իրանց խարեր համար չուզեցանք ծածկել: Եթէ այդ պարունները իրանց ինքնասիրութիւնը վիրատրուած են համարուն, խնդրում ենք, որ ինչքան որ կարող են ապացոյցներով հաստատեն իրանց գրուածքի արժանաւորութիւնը: Մենք կրկնում ենք դարձեալ, որ քաջի խօսքերից, ոչինչ կեանք չկայ այդ սուս դրամաների միջումը: Հեյնէի ասածի պէս մենք տեսնում ենք կոկորդաբար զիշեր. մի լոի քուն, մի զրոյի ստուեր, մի խառու ... Եւ մեր խօսքը ապացուանելու համար խոստանում ենք «Մեղու»ի միջոցով առանձին յօդուածով խօսել մեր դրամաների վրայ»<sup>41</sup>:

Բայց, չնայած Ամերիկեանի պատրաստակամութեանը, նրա նշած հեղինակներից ոչ մէկը եւ կամ ուրիշ որեւէ մէկը չի կարողացել ապացոյցներով հերքել դերասանի տեսակէտները, ապա այս հարցում եւս նա նոր առիթ չի ունեցել հանդէս գալու մամուլում:

Ամերիկեանի վերջին ծանօթութիւնը վերաբերում է «իսկական հեղինակներ»ին: Այս կարգի դրամատուրգների մասին տեսարան-դերասանը գրել է. «Հայկական սուս տրագեդիաների վրայ խօսելուց յետոյ, չենք կարող չայստնել մեր ամենամեծ քայլականութիւնը, այն մի քանի պիէսների համար, որ նորերում գրուեցան ի ձեռն քծշկապետ պարոն Տէր-Գրիգորեանի<sup>42</sup> եւ պարոն Սունդուկեանի: Փառք ու պատի դրանց: Որքան կեանք, որքան ճշմարտութիւն, եւ որքան կենդանի պատկեր-

Ներ կարող է տեսնել ամենայն նարդ այդ պատուական աշխատութեանց մէջ: Մեր ասածին ապացուցութիւն կարող են լինել պարոն Սունդուկեանցի այժմ նոր հեղինակած «Խաբարալա» վերտառութեամբ կոմեղիան, որը որ մի գեղեցիկ ստեղծագործութիւն է: Դերասանները կամենում են զատկից յետոյ ներկայացնել: Հիմիկուանից շնորհաւորում ենք համարձակօրէն պարոն Սունդուկեամին այն յաջողութեան համար, որ գտնելու է (ընդգծումը մերն է - Բ.Յ.): Լուս ենք, որ մի այսպիսի ազնի առարկայի ծեռնամուխ է եղել և թշկապես պարոն Տէր-Գրիգորեանը: Աստուած տայ, որ մեր ասածը դորդ լինի...»<sup>43</sup>:

**Սունդուկեանի Խաբարալայի նկատմամբ Ամերիկեանի յայտնած նախնական դրական կարծիքը բաւական է համոզուելու, թէ նա ինչ դիրքերի վրայ էր գտնւում ոչ այլիստական դրամատուրգիայի նկատմամբ իր հայեացքների ու պահանջների մէջ: Նախքան պիէսի բեմադրութիւնն ու տպագրութիւնը, Խաբարալային այլպիսի անմերապահ երաշխաւորագիր տալը պարզորոշ ցոյց է տալիս, որ դրամայի տեսութեան հարցերում Ամերիկեանը խորին համոզմունքով կանգնած է եղել արդիական, իրականութիւնը ճշմարտացի պատկերող դրամատուրգի անհրաժեշտութեան տեսակէտի ու դիրքերի վրայ:**

Քննադատելով պատմական թեմատիկայով անարժէք, անկենդան պիէսները, Զմշկեանի, Մանդինեանի եւ առհասարակ ազգային թատրոնի առաջադիմութեան հոգսերով պարող մարդկանց հետ, Ամերիկեանը եւս առաջնութիւնը ստուել է ժամանակակից կեանքը պատկերող պիէսին՝ կոմեդիային: Խոկ ինչպէս յայտնի է, կոմեդիայի բնորոշման հարցում իրենց յայտնած տեսակէտները հիմնաւորելու նպատակով նրանք նորից դիմել են Բելինսկու բարձր հեղինակութեանը: Նրանք այնքան են սեփականացրել, հիմնովին ընդունել Բելինսկու յայտնած մտքերը, որ թարգմանաբար տալով նրա բնորոշումները, նոյնիսկ չեն էլ ակնարկել թէ օգտուել են որեւէ աղբիւրից: Մի ուրիշ դէպքում նման վարմունքը գուցէ բանագողութեան փաստ նկատուէր, բայց տուեալ դէպքում՝ դա Բելինսկու հայեացքների հաստատումն է հայ թատերական քննադատութեան մէջ:

1880ականների նշանաւոր դերասաններ Զմշկեանը, Ամերիկեանը, Սուլքիասեանը, Մանդինեանը թատրոնի եւ նրա նշանակութեան մասին իրենց գրած յայտնի յօդուածում կոմեդիան ընդունելով որպէս առաջաւոր եւ «դրամատիկական բանաստեղծութեան վերջին ձեւ», օգտուելով Բելինսկու «Պոէզիայի Բաժանումը Սեռերի եւ Տեսակների» տեսական

աշխատութիւնից, փաստօրէն, կրկնել են նրա ասածը՝ «Կոմնդիան ցոյց է տալիս կեանքի երեւյթների հակասութիւնը կեանքի երթեան ու նշանակութեան հետ... կոմնդիան նկարագրում է զիշատրապէս հանապազօթնայ կեանքը, նրա արժանիքները, մանր ու մունք երեւյթները, դիապուածները ... Կոմնդիայի մէջ կեանքը այնոր համար է ցուցանում մեզ այնպէս տգեղ, ինչպէս որ կայ, որ մենք կարողանանք հասկանալ կեանքը այնպէս, ինչպէս որ պէտք է լինի նա»<sup>44</sup>:

Հայնէի նամակի թարգմանութեանը կցած ծանօթագրութիւններում Ամերիկեանի առաջ քաշած հարցերը թէեւ լայն արձագանգ չստացան, բայց եւ լուռ չանցան: Ոչ այնքան սկզբունքային առարկումներով, որքան խուսափողական եւ հին հաշիւներ մէջտեղ հանելու մանր հարցերով՝ հրապարակ է եկել Երիցեանը: Մեզու Հայաստանի թերթի խմբագրութեանն ուղղած նամակում նա գրել է. «Հեյնէի Ֆրանսիական Թատրոնի Մասին» գրած առաջին նամակի թարգմանութեան տակը բարգամնիշ պ. Մ. Ամերիկեանը արել է մի քանի ծանօթագրութիւններ, որոնցից մէկի մէջ դա սեպականում է ինձ այնպիսի մտքեր եւ կարծիքներ, որոնցից ոչ մէկը չէ թէ միայն իմ գրածներս չեն, այլև մինչեւ անգամ չգիտեմ թէ որտեղից է հնարել ... նա ասում է.

1) Իբրև թէ ես (չգիտեմ որտե՞ղ եւ ե՞րբ) ասել եմ կամ գրել եմ ամենավճռական կերպով, որ որեւիցէ պիեսա, ինչ տեսակ էլ որ գրուած լինի, պէտք է միօրինակ գերազանց խաղալ:

2) Իբրև թէ ես հայ դերասաններից պահանջել եմ այն բարականութիւնը, որը որ Բեյնսկին ոգենորուած Մոշալովիցն էր ստանում:

3) Իբրև թէ ես ասել եմ պարոն դերասաններին, թէ չինչ թէ Շերսպիրի կամ մէկ ուրիշ լաւ հեղինակի գրուածքին դիմէք, - այդ ծեր կողմիցը տղիտութեան նշան է եւ այլն, եւ այլն»<sup>45</sup>:

Ամերիկեանին մեղադրելով այն բանում, որ նա վերովիշեալ կարծիքներն իրեն վերագրելով, փաստական ոչ մի աղրիւր չի լիշտատակել, Երիցեանը նրա ասածները համարել է դոնքիշոտութիւն եւ խորհուրդ տուել պատերազմել ի՞ր իսկ ստեղծած թշնամու դէմ: Զնայած Ժխտողական այս յայտարարութեանը, այնուամենայնիւ, նամակի յետագայ տոնից զգացւում է, որ տարիներ առաջ, նրանք ստեղծագործական հարցերի շուրջը ծագած ինչ որ վէճել են ունեցել: Մտարերելով Սանարուկի (պոլսահայ դրամատուրգ Թերզեանի (1838-1909) Մանդուխտ Կոյս ողբերգութիւնում - Բ. Յ.) դերակատարութիւնը, որով Ամերիկեանը հանդէս էր եկել 1868ին, Երիցեանը չարավիշութեամբ գրել է՝ «Եթէ

չեն կարող սրանք խաղալ, ինչպէս կարող են Ծբսպիրին մերձենալ»<sup>46</sup>: Այսքանով շրաւարարուելով, նա աւելացրել է՝ «Վերջապէս թէ ի՞նչ է պ. Ամերիկեանը բնմի վերայ, իրեն դերասան, թիֆլիզեցիրս շուտով վատարախտորին կ'ունենանք Զատկից յետոյ, կրկին տեսնելու Հայկական թատրոնում: Պ. Ամերիկեանի ուժի չափելը դժուար չէ»:

Եետադարձ մի հայեացքով տեսնենք թէ Սանատրուկի դերակատարութեան ժամանակ Ամերիկեանի ի՞նչ անյաջողութեան մասին է, որ մատի փաթաթան է դարձրել երիցեանը եւ անվստահութիւն ցուցարեն բել Զատկից յետոյ տեղի ունենալիք նրա նոր դերակատարութեան նկատմամբ:

Ամերիկեանի մասին իր յօդուածում, Զմշկեանը դրուատելով խաղնկերոջ արուեստը, գրել է. «Ամերիկեանին չեն յաջողութել միայն երկու դրամատիկական դերեր, այն է Սանատրուկ արքայի դերը Սանդուխտ անուանուած որերգութիւնում եւ Կարլոս Է.ին՝ Էռնանի պիեսայում»: Զմշկեանը դա բացատրել է առաջինի՝ որպէս ո՛չ լիարժէք կերպարի անբաւականութեամբ, այսինքն՝ հեղինակի կողմից ոչ լիարժէք կերպար տալու, իսկ երկրորդի՝ համար՝ «գիրասանի այն ժամանակուայ դեռահասութիւնը, եւ գուցէ մեկ կողմից դերասանական ամբողջութեան (ensemble) բոլորին եր եւ միւս կողմից հանդիսականների անպատրաստ լինելը Վիկտոր Հիւզոյի բարձր գաղափարներն ընբնելու»<sup>47</sup>:

Առանց Սանատրուկի կերպարի ոչ լիարժէքութեան եւ անբնական լինելու հանգամանքի էլ - մի բան, որի դէմ պայքարի էր ելել նա - մենք այն կարծիքի ենք, որ Ամերիկեանն իր դերասանական խառնուածքով ծնուած չի եղել թագաւորների եւ կամ ճայնափողերի դերեր կատարելու համար: Նրա տարերքը, խառնուածքը մարդկային ապրումներով լի, հոգերանական անցումներով եւ ուժեղ կամքի լիարժէք կերպարների մարմնաւորումն է եղել: Եւ նա, որպէս այդպիսին է մնացել հայ թատրոնի պատմութեան մէջ:

Ահա մի ուրիշ, թէեւ անուղղակի, բայց հարցի պարզաբանման համար չափազանց արժէքաւոր մի բացատրութիւն: Իր յօդուածներից մէկում, թատերական քննադատ Միմոն Հախումեանը<sup>48</sup> գրել է. «Հանգուեալ քանքարաւոր արտիստ Աղամեանը մի օր ասում էր խօսակցութեան ժամանակ.- «Ես կը սարսափեմ հայ թագաւորի կամ իշխանի մը

դեր խաղալ, ախապար, աղոնք խելք չեն ունեցեր, աղ դեռ կերպ մը կարելի է ներել. բայց աղոնք աքոռ մը չեն ունեցեր նստելու»<sup>49</sup>:

Աղամեանի պէս գերասանի հետ կապուած այս օրինակն ու բացատրութիւնը ցոյց է տալիս, որ Ամերիկեանի անյաջողութիւնը Սանատորութիւնը ոչ թէ գերասանից էր գալիս, այլ գերից, զրամատուրգից: Ժամանակին այդ թերութիւնը շատ ճիշտ նկատել է թատերական քննադատ Տէր-Ալեքսանդրեանը, որը, Մանդուխտ Գոյախ բեմադրութեան առիթով գրել է թէ «Քերութեան մեծ մասը գրուածքիցն էլ էր»<sup>50</sup>:

Անշոշտ, թատրոններում տեղ գտած պրակտիկայից ենելով է, որ նման դէպեհի համար Բելինսկին ընդհանրացրել է. «Եթէ հեղինակի ստեղծած կերպարը ճշմարտացի չէ, կոնկրետ չէ, այս ինչպէս էլ որ հիասքանչ լինի դերասանի խաղը, այն կը լինի հմտորեն, բայց ո՛չ արուեստ, օյինքագործիւն, բայց ո՛չ ստեղծագործութիւն»<sup>51</sup>:

Անդրադառնալով գերասան Ամերիկեանի եւ լրագրող Օրիցեանի միջեւ ստեղծագործական հողի վրայ տեղի ունեցած բանավէճի սկզբունքային նշանակութեանը, պէտք է ասել, որ Օրիցեանը նոյնպէս ծանօթ լինելով Մոչալովի մասին Բելինսկու գնահատութեանը, ո՛չ այլ եւ ո՛չ էլ Ամերիկեանի ծանօթագրութիւնների առիթներով չի անդրադարձել պիտիսի, զրամատուրգի եւ գերասանի փոխադարձ համագործակցութեան, լրացման, աշխատանքի ընութեագրման հարցերին: Նա ոչ միայն չի յայտնել իր տեսակէտները, այլև կասկածի տակ է գրել Ամերիկեանի գերասանական անվիճելի ընդունակութիւնները: Չնայած դրան, ինչպէս մամուլում վարած սկզբունքային վէճի ժամանակ, այնպէս էլ բեմի վրայ ստեղծագործելիս, կեանքում ճշմարտութիւնը բացայացուել է յօդուա Ամերիկեանի, նրա յայտնած առաջադէմ մտքերի Հակառակ Օրիցեանի տարակուսանքի ու կանխագուշակման, բաներեքամեայ Ամերիկեանը հռչակուել է հենց այն դերերում, որոնց տապալումն էր գուշակել Օրիցեանը:

Օրիցեանի սպասած Զատիկն անցնելուց յետոյ, 1868ի Ապրիլի 7ին, Թիֆլիսի Քաղաքային (Թամամշեանի) թատրոնում, առաջին անգամ բեմադրուել են Սունդուկեանի Խաթարայա կոմեդիան եւ Տէր-Գրիգորեանի ծով թէ Թիֆլիսութիւն վողեւիլը Երկու պիէսի եւ նրանց գերակատարների գտած յաջողութեան մասին Մեղու Հայաստանի թերթում գրուել է. «Չատ լաւ էին ... տիկին Սովիհա Նազարեանը եւ տիկին Ջեթեան Արամեանը»<sup>52</sup> ու պ.պ. Չնշկեանը, Սուրբիասեանը եւ մանաւանդ

Ամերիկեանը, որին Զատկից յետոյ ոչ թէ վատարախտութիւն, այլ մեծ բաւականութիւն ունեցան ամէնքն էլ տեսնելու սցենայի<sup>53</sup> վերայ այնպէս, նա ներկայացաւ վերոյիշեալ երկու պիտաների խաղարկութեան մէջ, ըստ որում Գարասիմ Եակուլիշի դերը<sup>54</sup> «Խարարալայի» մէջ ու քաջալ Կարապետի դերը «Մոցիքուլութեան» մէջ այնպէս կենդանի կատարեց նա, որ կարծես յիշեալ դերերը իրանք իրանց կենցաղավարութեամբ ներկայ էին սցենայի վրայ»<sup>55</sup> (Ընդգծումը մերն է - Բ.Ց.):

Ահա, այս դերակատարումների գնահատութեան մէջ էր Ամերիկեանի թէ՛ բարոյական եւ թէ՛ ստեղծագործական յաղթանակը: Սա է, որ հիմնաւորում ու հաստատում էր ռէշալիստական դրամատուրգիայի եւ դերասանական արուեստի, կեանքը բամում ճշմարտացիօրէն վերաբարդրելու մասին Ամերիկեանի հայեացքները:

\*\*\*

Մոչալովի Համլէտի դերակատարութեան մասին թելինսկու գրած յօդուածին ծանօթ է եղել նաեւ ՅՈԱԿԱՆՆԵՐԻ միւս խոչոր ռէշալիստ գերասան Զմշկեանը: Բայց ոչ միայն ծանօթ: Նա եղել է թելինսկու թատերական ու գեղագիտական հայեացքների կիրառողը հայ թատրոնում:

Թելինսկու եւ ժամանակի ուրիշ այլ թատերական քննադատների ստեղծագործութիւններին Զմշկեանը ծանօթացել է մինչեւ թատրոնի հետ կապուելլու նա ռուսերէն եւ ֆրանսերէն լեզուներով կարդացել է ուստի եւ երոպական դրամատուրգիայի եւ թատրոնի մասին եղած որոշակի գրականութիւն: ծանօթ է եղել Շեքսպիրի դրամատուրգիային եւ նրա հերոսների դերակատարների մասին եղած գրականութեանը, այդ թւում նաեւ թելինսկու թողած գրական-թատերական ժառանգութեանը: Այնպէս որ, Զմշկեանը թատրոն է մտել որպէս տեսականորէն պատրաստուած թատերական գործիչ: Իսկ դա քիչ դեր չի կատարել նրա թատերական գործունէութեան ընթացքում: Լինելով թատրոնի զարգացման նախանձախնդիր առաջատար ուժ՝ թատերախմբերի կազմակերպիչ, դերասան, ռեժիսոր, դրամատուրգ, թարգմանիչ, թատերական քննադատ, նա մեծ ծառայութիւններ է կատարել թատրոնը իր՝ հենց սկզբնական քայլերից ռէշալիստական, պրոֆեսիոնալ ուղղու վրայ գնելու անհրաժեշտ գործում: Զմշկեանի ջանքերով են առաջին անգամ կովկասահայ թատրոն մուտք գործել ուստի եւ երոպական դրամատուրգները՝ Օստրովսկին, Շեքսպիրը, Շիլէրը եւ ուրիշներ: Նրա անմիջական յոր-

դորով է գրուել *Սունդուկեանի անմահ Թէպօ կատակերգութիւնը*, որը Հեղինակը նուիրել է Պէպոյի առաջին դերակատար Զմշկեանին:

Իր թատերական յիշողութիւններում Զմշկեանը գրել է. «Ես կատարեալ ուսումնական էի: Կարդում էի Բելինսկի եւ մէկ քանի ժամանակից յետոյ անցայ դէպի Բորլը<sup>56</sup>, որից իմացայ, որ ես սաստիկ կոսմոպոլիտ պիտի լինիմ եւ ինց այդ ժամանակներում վրայ հասաւ Լիլիսի<sup>57</sup> ուսական թարգմանութիւնները... մէկ խօսքով՝ սարսափելի ուսումնական եւ գիտնական չինովնիկութիւնով<sup>58</sup> մէկ օր, գրադուած Բելինսկիով, Բորլով եւ Լիլիսով, ամենադատարկ գրպաններով անցնում էի մէկ մեծ փողոցով, տեսայ մէկ յայտարարութիւն՝ պիտի կպած պատին: Մօտեցայ եւ կարդացի, յայտնի բան է, շատ դժուարութեամբ, Արշակ Բ., գործող անձինք. Ծահիսարունեան, Ամերիկեան, Մատինեան, Սուրբիասեան եւ այլն, եւ այլն. Դաշակ Ղազօ<sup>59</sup>, որի տակ դարձեալ կային Մատինեան, Սուրբիասեան, Ամերիկեան եւ այլն»<sup>60</sup>:

Զմշկեանի նկարագրած այս անցքը տեղի է ունեցել 1863ի Յունուարի 3ին, այսինքն այն ժամանակ, երբ լրիւ հրատարակուել էին Բելինսկու երկերի տասներկու հատորները՝ Այսպիսով, մինչեւ թատրոնի հետ գործ ունենալը, Զմշկեանն արդէն կարդացել էր Բելինսկուն եւ յաւ ծանօթ էր նրա թատերական ու գրական ստեղծագործութիւններին: Զմշկեանի կողմից Բելինսկուց կարդացած բազմաթիւ յօդուածներից մենք պարզել ենք հետեւեալները՝ Եւ իմ Կարծիքը Պ. Կարատիգինի Խաղի Մասին, Պոչշիայի Բաժնենումը Սեռերի Եւ Տեսակների, Համբէտ - Հրամա Շեքսպիրի - Մոչալովը Համբէտի Ներում:

Թերեւս, հենց Բելինսկու յօդուածներին նախապէս ծանօթ լինելու հանգամանքն էլ որոշակի դեր է խաղացել Զմշկեանի կեանքում, ոչ միայն նրան ընդմիշտ կապել հայթատրոնի հետ, այլև՝ թողնել հողաչափ ինժենէրի իր մասնագիտութիւնը եւ ամբողջովին նուիրուել թատերական ասպարէզին:

Տեսականորէն պատրաստուած Զմշկեանն իր բեմական գործունէութեան հենց սկզբնական քայլերից կանգնած է եղել ոչալիստական արուեստի դիրքորոշման վրայ Կասկածից վեր է, որ դերասանի վարպետութեան հարցերում նրա հայեացքների ձեւաւորման վրայ իրենց բա-

բերար ազդեցութիւնն են ունեցել Բելինսկու գնահատականները Մոչալովի դերակատարումների մասին:

Որ իսկապէս իր բեմական գործունէութեան առաջին տարուանից Զմշկեանն ընտրած է եղել բեմական ոչալիզմի ուղին, դա լիովին ընորոշում է Շեքսպիրի Թիմոն Աթենացու (Բելինսկու ընորոշմամբ՝ անարիւն ողբերգութեան) իր թարգմանութեան ընթերցանութեան պատմութիւնը: 1863ի Յունուարին թարգմանելով Թիմոն Աթենացի ողբերգութիւնը, Զմշկեանն իր մօտ է հրաւիրել Պոչեանի ղեկավարութեամբ դերասանական խմբի դերասաններ Ամերիկեանին ու Սուքիասեանին եւ որոշ հատուածներ կարդացել նրանց համար: «Այդ ընթերցանութեան ժամանակ,- զրել է Զմշկեանն իր յուշերում,- ես նկատեցի, որ թէ՛ իմ կարդալու եւ թէ՛ շեշտահարութեան ձեւը (որովհետեւ ես աշխատում էի կարդալ այնպէս, ինչպէս երեւակայում էի, թէ պիտի կարդամ քատրոնական բնմից) նրանց շատ անծանօթ բուաց եւ անգամ ծիծաղ պատճեց: Կարդում էի շատ հասարակ եւ բնական ձեւով» (Ընդգծումը մերն է - Բ.Ց.)<sup>11</sup>:

Տեքստը բնական ձեւով կարդալու եւ բնմից արտասանելու՝ փաստորէն Զմշկեանի նորարարական այդ առաջարկը վիճարանութեան հարց է դարձել, բայց ի վերջոյ ճշմարտացին եղել է բնականը, պարզութիւնը, առօրեայ խօսակցական ձեւը: «Նորք, -աւելացրել է Զմշկեանը, - համոզուած էին, որ պիտի ընդունուած երգեցողական, կամ ինչպէս ասում են մինչեւ այժմ, ողբերգական առողջանութիւնով արտասանել ամէն մէկ խօսք, որպէս թէ այդ ձեւով առանել կարելի է զրդել հանդիսականների վերայ: Ես սկսեցի հերքել այդ կարծիքը եւ օրինակ բերեցի զանազան քատրոնական բնմեր, որտեղից վաղուց արտաքուած է այդ հնացած մերողը, որ միայն բքացնում է դերասանի ընդունակութիւնը, որովհետեւ դերասանը սովորելով այդ ձեւին, այնուհետեւ շինում է նորան իր համար մերենայական արհեստ եւ չի մշակում իր ընդունակութիւնը, երբեմն տաղանդն անգամ»:

Պատրաստի մշակուած, մեքենայաբար, միօրինակ արտասանութիւնից խուսափելու եւ իւրաքանչյուր կերպարին իրեն յատուկ խօսքն ու ինտոնացիան տալու՝ Զմշկեանի այդ արդարացի պահանջը հայ թատրոնի զարգացման համար կարեւոր, սկզբունքային նշանակութիւն է ունեցել, որովհետեւ, ժամանակի առաջադիմական պահանջի համաձայն, ոչալիստական ուղղութիւնը թատրոնից դուրս էր մղում կեղծը, միօրինակը, կասափկանի անուան տակ աղաւաղուած արուեստը: Խսկ այդ բոլորին՝ ոչալիստականին հասնելու համար Զմշկեանին օգնել են Բելինս-

կու արուեստագիտական հայեացքները, Մոչալովի դերակատարումների օրինակները եւ այն թատրոնների փորձը, որին ծանօթ է եղել նա անձամբ կամ գրականութիւնից:

Մոչալովի խաղի մասին Բելինսկու գնահատութիւնները խոշոր չափով նպաստել են Զմշկեանի դերասանական արուեստի զարգացմանը: Սա անառարկելի մի փաստ է, որը խոստովանել է ինքը՝ դերասանը:

1873ի Մայիսի 3ին, կովկասահայ բեմում գերմանացի նշանաւոր բանաստեղծ, տեսարան եւ դրամատուրգ Ֆրիդրիխ Շիլլեր (1759-1805) Աւազակների առաջին բեմագրութեան առթիւ, Զմշկեանն իր յուշերում գրել է. «Յատրոննական գործունեութեան մէջ, ոուսաց երեւելի կրիտիկոս Բելինսկու՝ քառասնական թուականների յայտնի դերասան Մոչալովի խաղի բննադասուրեան ազդեցութեան տակ, որի (Մոշալովի) Կարլ Սօօրի խաղը Աւազակների մէջ Բելինսկին իրեամ սեփական քանաստեղծական յափշտակուրիւնով է նկարագրում, ես կամնաում էի իմ ուժու փորձել այդ պիեսայի հերոսների Ֆրանցի կամ Կարլոսի դերի մէջ: Այդ նպատակով, դեռ վարսունական թուականներին, չեմ յիշում որ տարին, ես խնդրեցի մեր այն ժամանակուայ հայ քատրոնի գործունեութեան վետերան-հեղինակ եւ Թուոր Խաղացողի Կեանը պիեսայի քարգմանից Միքայէլ Պատկանեանին՝ քարգմանել ինձ համար այդ պիեսայի այն տեսարանը, որտեղ Ֆրանց Սօօրը, խղճի տաճանքի ազդեցութեան տակ, խեղդում է իրան: Ինչ-ինչ պատճառներով յաջողութեան ներկայացնել այդ կտորը, մինչեւ որ Աւազակներին ամրողութեամբ քարգմանեց, դարձեալ իմ խնդրանօր, իմ երիտասարդ քարեկամներից մէկը՝ Ն. Լալայեանը եւ որի մէջ ես յետոյ վեր առայ Կարլոս Սօօրի դերը, յանձննելով Ֆրանցինը Ամերիկեանին»<sup>62</sup> (ընդգծումը մերն է - Բ.Յ.):

Զմշկեանի տուած այս ընդարձակ քացատրութիւնից պարզ երեւում է, որ նա ոչ միայն ծանօթ է եղել մեծ ողբերգակ դերասան Մոչալովի այլեւայլ դերակատարումներին եւ նրանց մասին Բելինսկու գնահատութիւններին, այլեւ իր դերակատարութեան համար հիմք է ծառայեցրել մեծ քննադատի ոգեշունչ կարծիքները Մոչալովի դերակատարման մասին: Իր դերակատարութեան նախապատրաստման շրջանում, Զմշկեանն ակնյայտուէն օգտուել է Մոչալովի կերտած կարլոսի մասին Բելինսկու հետեւեալ բնութագրութիւնից: «Երբ այդ քանաստեղծական Սօօրը, այդ ընկած հրեշտակը, ցոյց է տալիս անզգայ փոռուած ծերուկնահատակին եւ անմարդկային ծայնով քացականչում «Օ, նայեցէր, նայեցէր - սա իմ հայրն ծ», երբ նա իր ընկերոջ մեծահոգի արարքին

իրեմ պարզեւ նրա վրայ պարտականութիւն է դնում Վրէժիսնոյիր լինել իր հօր համար եւ, ծնոքերը դէախ երկինք բարձրացնելով, անհծում է ճիւաղ-եղրօրը - Օ ծեր մէջ մարդկային հոգի չկայ, մարդկային զգացմունք չկայ, միթէ դուք չէք փայտանում, սարսափի եւ քաղցր բերկրանքի հետ չէք քարանում»<sup>83</sup> (Ընդգծումը թելինսկուն է - Բ.Ց.):

Զմշկեանը ոչ միայն ինքն է խանդավառուած եղել թելինսկու ոգեշունչ գնահատութեամբ, այլև իր խանդավառութեանը մասնակից է դարձրել նաեւ Աւագափների թարգմանիչներ Պատկանեանին եւ Նիկողայոս Լալայեանին, որոնք նոյնպէս տեղեակ ու ծանօթ են եղել ուստի գեմոկրատ քննադատի ստեղծագործութիւններին: Եւ արդեօք այս խանդավառութեան արդիւնք չէ, որ Զմշկեանի յորդորանքներով է կովկասահայ թատրոնում առաջին անգամ հրապարակ իջել Աւագափների թարգմանութիւնը: Տարակուսելու համար հիմքեր չկան:

Ինչպէս տեսնում ենք, այս տուեալները վկայում են, որ դեռեւ 19րդ դարի ՅՈԱԿԱՆՆԵՐԻց, Մոչալովի Կարլոսի դերակատարութեան մասին թելինսկու գնահատութիւնները ուղենիլ են Հանդիսացել Հայ դերասանների համար՝ նրանց ստեղծագործական կեանքում: Սա ուշագրաւ վկայութիւն է այն մասին, որ միայն Համբէտի առիթով չէ, որ Հայ դերասանները թելինսկու յօդուածների միջոցով ծանօթացել ու դիմել են Մոչալովի դերակատարումներին:

Կարլ Մօօրի դերակատարութեանը դիմելու այս օրինակը, ինչպէս 1880 եւ 1900ականներին էլ Համբէտի առիթով է Նկատուում, վկայում է, որ Հայ պրոֆեսիոնալ թատրոնի զարգացման հենց սկզբնական քայլերից՝ թատրոնի, դրամատուրգիայի, թատրոնական քննադատութեան հետ զուգահեռ հայերը պարբերաբար անդրադառել են թելինսկու՝ սկզբունքային նշանակութիւն ունեցող Հայեացքներին նաեւ դերասանի առուեստի, նրա վարպետութեան հարցերին, լաւագոյն օրինակ ունենալով Մոչալովի սքանչելի դերակատարումները:

Հայ գրական, հասարակական եւ թատրոնական մտքի ներկայացուցիչների՝ տարբեր առիթներով Մոչալովի արուեստին եւ թելինսկու հեղինակութեանը դիմելու այս շրջանի հիմնական շարժառիթը ոչայլիզմի ամրապնդումն է Հայ թատրոնում կապուած թելինսկու երկերի ու Հայեացքների տարածման հետ:

## ՄԱՆՈԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

- 1 Պաւէլ Ստեփանի Մոչալով (1800-1848) - Հերոսառողմանտիկ խաղաղի, ուժեղ խառնուածքի դրամատիկ դերասան:
- 2 Վիսարիոն Գրիգորի Բեյինսկի (1811-1848) - ռուս յեղափոխական-դեմոկրատ, գրական-թատրոնական բննադիր, հրապարակախօս: Անրաւարար սովորելու պատճառով հեռացուել է Մոսկովայի Համալսարանից (ուր ունեցել է մի քանի հայ դասընկերներ), բայց դարձել է ժամանակի հեղինակաւոր դէմքերից մէկու նրա թարգմանական առաջին գործը՝ Փրանսիացի ժամանակակից գրող Պոլ Դը Կուկի Մազգաշինա վէպի թարգմանութիւնը, լոյս է տեսել Լազարին մեմարանի Հրապարակութեամբ (1833): Դեռևս 19րդ դարից մասուլում, իսկ այնուհետեւ գրքերով լոյս են տեսել նրա բազմաթիւ աշխատութիւններ: Նրա մասին առաջինը հանգամանալից ուսումնասիրութիւն է գրել Նիկոլ Աղրայեանը (Մուրճ, նոյ. 6-8, 1898), իսկ ոռու իրականութեան մէջ՝ Գրիգոր Զանշանը Յատկանշական են թէցինսկու Հուման (1892), և Սցարյարական Օգենութիւն Թուրքիայում Տուշան Հայրին (1897, 1898): Մոսկովայում ուսուերէն լոյս ընծայած ժողովածուները ոռու եւ հայ տառապեանների օգտին թեյինսկու ստեղծագործութիւններին անդրադարձել են բազմաթիւ հայ գործիչներ:
- 3 Մոսկովեան դիտորդ՝ ամսագիր, որը լոյս է տեսել 1835-1839թթ.:
- 4 Միխայլ Սեմյոնի Շչեպկին (1778-1863) - նախակին ճորտ, դերասան, դերասանական ուչակիստական ուղղութեան հիմնադիրը ռուս թատրոնում: Իր ուսանողական տարիներին Պետերբուրգում նրանով յափշտակուած է եղել ապագայ գրամատուրդ Գարրիկի Սունդուկեանը:
- 5 Նիկոլայ Պոյեւոյ (1796-1846) - դրամատուրգ, թարգմանիչ, քննադատ: Հատա հետաքրքրական է, որ Ռուսաստանի եւ Ռուսական դերասանական խմբերի հետ Պետրոս Աղամենանը Համբէտ է խաղացել Փրանսիերէն, ձեռքի տակ ունենալով Պոյեւոյի թարգմանութիւնը (Համբէտի դերի վրայ փակցրել է Փրանսիերէն թարգմանութիւնը): Ոչ պակաս ուշագրաւ է եւ այն, որ 1870ին Պետերբուրգում լոյմ տեսած այլ գրքի Աղամենանի օրինակը, տարիներ անց ինչ-ինչ ճանապարհով հասել է Բէյրութ: 1868ի Հոկտեմբերի 14ին Բէյրութարնակ Նիկոլոս Յակոբեանը բարձր գնահատելով նրա պատմական արժէքը, այն նուիրել է Հայաստանի Ե. Զարենցի անուան Գրականութեան եւ Արուեստի թանգարանի (ԳԱԹ) եւ այժմ պահուում է Աղամենանի Փոնդում, N. 6:
- 6 Խւան Խւանի Պանաև (1812-1862) - գրող, խմբագիր (մօր կողմից Հայ): Ֆրանսիերէնից նրա թարգմանած Օթեցօն բնագրի հետ բառ առ բառ համեմատել է իր բարեկամ Մաթեևս Ղամազեանը (1811-1863): (Պանաևի մայր Մարիան եւ Ղամազեանի մայր Եկատերինա Լայաշեանները եղել են Հօրեղոր աղքիկեր՝ աստրախանցիներ): Այս մասին մանրամասն տե՛ս մեր յօդուածը՝ "Shekspir V Perevode Garmazova" (Եթսպիրը՝ Ղամազովի թարգմանութեամբ), Literaturnaya Armeniya (Գրահանք Հայաստան), 1984, թիւ 4, էջ 70-82: Ռուս իրականութեան մէջ առաջինը Ղամազեանն է թարգմանել Շեքսպիրի Փոթորքի պիէսը եւ արժանացել թեյինսկու գնահատութեանը (1840):

- 7 Ժան Ֆրանսուա Շիլսի (1783-1816) - Փրանսիացի դրամատուրգ, թարգմանիչ, 1804ին վենետիկի Միջինարեան միարանութեան դպրոցական թատրոնում նրա փոխադրութիւնից կատարուած թարգմանութեամբ է քեմադրուել Շեքսպիրի Մակբրդը
- 8 Թէոդորոս Խատամեան (ԺԹ. Դար) - մանկավարժ, թատերական գործիչ, աւարտել է Լազարեան ճեմարանը եւ Մոսկուայի համալսարանը
- 9 Սարգիս Աւետի Տիգրանեան (1811-1875) - մանկավարժ, թատերական գործիչ Աւարտել է Լազարեան ճեմարանը եւ Մոսկուայի համալսարանի բանասիրական բաժինը. եղել է Բերինսկու դասընկերը Նրա թարգմանութեամբ Լազարեան ճեմարանի տպարանը 1834ին լոյս է ընծայի Քանանիացի դրամատուրգ Ռասինի Գոյթոցիա ողբերգութիւնը ինչ ինչ Զեղբերքութիւնն ընդարձակ առաջարանով (էջ 7-98) նույնուած անտիկ ժամանակներից մինչև իր օրերի դրամատուրգիայի պատմութեանը Միքայէլ Նալբանդեանը բարձր է գնահատել Խատամեանի եւ Տիգրանեանի ծառայութիւնները Նոր Նախինանի թատրոնի հմտնադրման գործում:
- 10 Գէորգ Ախմերդիի Ախմերդեան (1818-1861) - բժիշկ, բանահաւաք, հասարակական գործիչ, Սայեաթ-Նովայի երգերի առաջին ուսումնասիրողն ու հաստարակողը (Մոսկուա, 1852): 1840ականներին նրա զինուորական հայրը, Ընտանիքով ապրել ու գործել է թարգում:
- 11 Սարգիս Ցովաննիսեան - Գէորգ Ախմերդեանի դասընկերը Ճեմարանում եւ համալսարանում, բժիշկ: Մահացել է երիտասարդ տարիքում:
- 12 Մկրտիչ Էմին (1815-1890) - հայագէտ, թարգմանիչ, մանկավարժ: Աւարտել է Լազարեան ճեմարանը եւ Մոսկուայի համալսարանի բարոյաբաղաքական բաժինը (1839): Իր բոյրը երախտաւոր ծառայութիւններից բացի, նա համարւում է ուսու գրող Ա. Պուլկինի (1799-1837) առաջին հայ թարգմանիչը: 1834-35ին նա թարգմանել է Պուլկինի Գովզիասի Ֆերին եւ Բախչիարացի Շատրուածք պոչմերը՝ գրաբար: Աւելի մանրամասն տես, մեր՝ Պուլկինը Հայ թատրոնում, Երեւան 2002, էջ 10-13:
- 13 Յարութիւն Թէոդորոսի Խատամեան (19-20րդ դդ. ) - երասան, թատերական գործիչ, եղել է Նոր Նախինանի Դրամատիկական Արուեստը Սիրողների Ընկերութեան առաջին նախագահը 1880ականներին:
- 14 ԳԱԹ, Գ. Ախմերդեանի Ֆոնդ., Զրդ բաժին. N. 131: (Օտեքնատպէննիէ Զապիսիքի - Հայրենական նոթեր) - կիսամսեայ ամսագիր (1835-1884):
- 15 Նիկոլայ Գաւրիլի Զերնիշեսկի (1828-1889) - ականաւոր գրաքննադատ, հրապարակախոս, ուսու գեղագիտական մտքի խոշոր ներկայացուցիչ: Աքսորի տարիներին Աստրախանում որոշ շրջան ապրել է Հայերի միջավայրում: Նրա մահուան կապակցութեամբ Հնչակ թերթը կարմիր տառերով է տպագրել նրա անունը

- 16 Սովորեմնենիկ (Ժամանակակից) - դեմոկրատական ուղղութեան ամսագիր, ուր տպագրուել են Բեյինսկին, Դորոլիւրովը, Գերնիշեւսկին, Պանաելը, բանաստեղծ Նեկրասովը եւ ուրիշներ. Հայերից՝ Մաթեւոս Ղամազեանը, Մաթեւոս Լալայեանը
- 17 Իւան Սերգէյի Տուրգենև (1818-1883) - ոռւս գրող, Միքայէլ Նալբանդեանի արտասահմանեան ծանօթենից. Նրա բազմաթիւ գործեր գեռ. իր կենդանութեան օրերին թարգմանուել են Հայերէն:
- 18 Տե՛ս՝ Ivan Turgenev, *Sochinenie (Ծրգեր)*, հ. 11, Մոսկովա, 1949, էջ 153.
- 19 Նիկոլայ Ալեքսանդրի Դորոլիւրով (1836-1861) - ոռւս դեմոկրատ գրականագէտ-քննադատ, Հրապարակախօս: Նրա գործերից Հայերէն թարգմանուել են դեռևս 19րդ դարում:
- 20 Nikolai Dobrolubov, *Sobranie Sochinenie V 3 Tomakh*, (Ծրգերի ժողովածու, Յ Հատու-բայ), հատ. 2, Մոսկովա, 1962, էջ 505.
- 21 Տե՛ս՝ Արտաշէս Կարինեան, «Գերնիշեւսկին Եւ Պարբերական Մամուլի Պատմութեան Մի Քանի Հարցեր», ՀՀ ԳԱ Տեղեկագիր (Հասարակական Բաժանմունք), 1963, Ն. 7, էջ 58-59.
- 22 Գէորգ Դաւթի Տէր-Ալեքսանդրեան (1840-1891) - գրական-թատրոնական գործիչ, թարգմանիչ, խմբագիր: Թիֆլիսում լոր է ընծայել Թիֆլիսեցոց Մտաւոր Գնաները (1885) ազգագրական գիրքը: Թարգմանել է ոռւս դրամատուրգ Ալեքսանդր Օստրովսկու Ուրիշի Սահմանի Մի Նստիք (որով ոռւս դրամատուրգին մուտք է գործել Հայ թատրոն, 1864ին) եւ Ալբրինեալոր Փաշտօն պիէսները:
- 23 Ալեքսանդր Դաւթի Երիցեան (1841-1902) - գրական-հասարակական գործիչ, Հնագէտ, պատմաբան, կովկասագէտ, խմբագիր: Պատմաշակութային բազմաթիւ Հարցերով գրած ուսումնասիրութիւններից բացի 1888ին Թիֆլիսում ուսուերէն հրատարակել է Թատրոնը Թիֆլիսում (1845-1866) ուշագրաւ գիրքը:
- 24 Մեղու Հայստանի, 1869, Սեպտեմբեր 26, Ն. 39, էջ 309-311: Մտորագրութիւնը՝ Տ. Ա. Գէորգ (Տէր-Ալեքսանդրեան):
- 25 Յակոբ Գէորգի Կարինեան (1808-1872) - գրամատուրգ, թարգմանիչ, մանկավարժ, թատրոնական գործիչ:
- 26 Միքայէլ Սերովէի Պատկանեան (1810-1895) - գրամատուրգ, մանկավարժ, թատերական գործիչ:
27. Լոիւ Վերնագիրը՝ «Միքայէլ Պատկանեանց Պատասխանիք Յակոբայ Կարինեանց Գրուածքի Դէմ»: Մեղու Հայստանի, 1860, Ն. 43-48, Հոկտեմբեր-Նոյեմբեր:

- 28 Բարսեղ Եփրեմի Աթամանեան (1829-1914) - գրական-կրթական գործիչ Անդրկովկասում:
- 29 Գռունձ Հայոց Աշխարհին, 1861, N. 11, էջ 819,
- 30 Առւրէն Խուղոյեան, Վ. Գ. Բելինսկու Մանկավայրժական ֆազավարենքը, Երեւան, 1957.
- 31 Գէորգ Զէշկեան (1837-1915), Միհրդատ Ամերիկեան (Յովհաննէս Ամրիկեան 1843-1879) - թիֆլոսահայ պրոֆեսիոնալ թատրոնի հիմնադիրներ, գերասան, թարգմանիչ, բեմադրիչ, Սունդուկեանի դրամատուրգիայում դրական ու բացասական կերպարների առաջին եւ փայլուն գերակատարներ Սերբաք Մանդինեան (1844-1916), Արտաշէս Սութիսսան (1840-1896) - գերասան, թարգմանիչ, մանկավարժներ:
- 32 Մեղու Հայաստանի, 1866, N. 10.
- 33 Հայնրիխ Հայլէ (1797-1856) - գերմանացի բանաստեղծ, քննադատ:
- 34 Պիոտր Իսայի Վէլնբերդ (1831-1908) - ռուս բանաստեղծ, թարգմանիչ:
- 35 Առաջին Հատորը լոյս է տեսել 1864ին հրատարակչի առաջարանով ու գրած կենսագրական ակնարկով:
- 36 Տէ՛ս՝ V. G. Belinski, O Drame i Teatre (Դրամայի Ծւ Թատրոնի Մասին), Մոսկուա, 1948, էջ 303-304:
- 37 Նոյն: Թարգմանութիւնը մերն է:
- 38 Շիրվանզադէ (Ալեքսանդր Մովսիսեան, 1858-1935) - գրող, դրամատուրգ: 1904ին գրուած եւ առաջին անգամ նոյն թուականին թաքուում բեմադրուած Պատուի Համար դրամայի գլխաւոր գործող անձը:
- 39 Խաթարայում բարոյական, իսկ Պատուի Համայում Ֆիզիկական (ինքնասպանութիւն գործած) գոհերը:
- 40 Բելինսկի, էջ 303:
- 41 Մեղու Հայաստանի, 1866, N. 10.
- 42 Միթայէլ Մովսէսի Տէր-Գրիգորեան (1827-1869) - բժիշկ, դրամատուրգ, թիֆլոսահայ բարքերի արտացոլող թատրոնում:
- 43 Մեղու Հայաստանի, 1866, N. 10.

- 44 Զմշկեան, Ամրիկեան, Սուքիասեան, Մանդինեան, «Նամակ Ամբագրութեան», Մեզու Հայաստանի, 1866, N. 4; տե՛ս նաև՝ Բելինսկի, էջ 96.
- 45 Մեզու Հայաստանի, 1866, N. 12:
- 46 Մեզու Հայաստանի, 1866, N. 38: Պաշտպանելով Մանդուխտ Կոյս պիէսի արժանիք-ները, Երիցեանը նրա բեմադրութեան մասին դրել է. «Ենքը պիէսան այնքան վաս չէ, ինչպէս վատացրին դրան դերասանները: Ես միևնույն խաղը տեսել եմ Պոյիս եւ Էրշեալի ու Ամերիկանի միջև երկու «Ուն ծով է փոռած»: Բայց այդտեղ նա նաև այն միտքն է յայտնել թէ «պիէսան որքան աւելի լաւ եւ կատարեալ լինի, այնքան աւելի հեշտ է նրան խաղալը եւ միջակ դերասանների համար էր».
- 47 Գէորգ Զմշկեան, Իմ Ծիշատակարանը, ՀՀ ԳԱ Հրատարակչութիւն, Երեւան, 1953, էջ 141.
- 48 Միմոն Գասպարի Հայումեան (1859-1905) - դրական-թատերական քննադատ, խմբագիր, բեմադրիչ:
- 49 Թատրոն, դրական եւ թատերական Հանդիս (Թիֆլիս), 1893, գիրք 1, էջ 72:
- 50 Մեզու Հայաստանի, 1863, N. 36:
- 51 Բելինսկի, էջ 304:
- 52 Սովիա Միքայէլի Մելք Նազարեան (տիկ. Իզմիրեան, 1846-1904), Քեթեւան Արամեան (1846-1878) - թիֆլիսահայ պրոֆեսիոնալ թատրոնի առաջին դերասանուհիներից:
- 53 Ռուսերէն՝ բեմ:
- 54 Գարասիմ Շակուլիչը նոյնինքն Կարապետ Յակոբի Զամբախովն է:
- 55 Մեզու Հայաստանի, 1866, նօ. 18:
- 56 Հենրի-Թոմաս Բոռլ (1821-1862) - անգլիացի սոցիոլոգ, պատմաբան:
- 57 Ջորժ-Հենրի Լիւիս (1817-1878) - անգլիացի գրող, փիլիսոփայ:
- 58 1851-1854ին Զմշկեանը սովորելով եւ աւարտելով Հոռաչափական ուսումնարանը, մինչեւ 1862 աշխատել է որպէս հողաչափ-ինժենէր, շրջագայելով Կովկասի տարրեր վայրեր:
- 59 Նիկողայոս Փուղինեան (1834-1880) - բժիշկ, դրամատուրգ, թատերական գործիչ՝ Մուկուայում եւ Թիֆլիսում, Թայշ Զաղոյի հոգինակ:

- 60 Զմշկեան, էջ 18:
- 61 Նոյն, էջ 25. Աւելի մանրամասն տե՛ս մեր յօդուածը՝ «Թիմոն Աթենացին Հայ Թատ-  
րոնում», Ծերապիրական, Գիրք 5, ՀՀ ԳԱ հրատարակչութիւն, Երեւան 1975, էջ 323-  
340:
- 62 Նոյն, էջ 102:
- 63 Բելինսկի, էջ 245:

THE BELINSKII-MOCHALOV-HAMLET LINK  
AND THE ARMENIAN THEATER  
(1840-1860s)  
(Summary)

BAKHTIAR HOVAKIMIAN

The article analyses the impact of Russian theatrical criticism on Armenian literary circles between 1840 and 1900. Belinskii was the forerunner of Russian literary criticism in those days, expanding the restricted and the outmoded conceptions of drama and stage acting in his homeland and modernizing them. Mochalov was the actor Belinskii had in mind as a living example of how an actor should perform on stage. Both exercised a very strong influence on Armenian youth studying in Moscow. Among them, Gevorg Akhverdian, Theodoros Khatamian, Sargis Hovhannesian, Sargis Tigranian and others were impressed by these new ideas and were instrumental in carrying them back to Tiflis (Tbilisi), where they helped bring about a qualitative change in the development of Armenian theater in the South Caucasus.

The influence of Belinskii and Russian progressive perspective also reached the South Caucasus through their publications. For instance, local Armenian writers and actors, like Gevorg Chmshkian and Mihrdat Amerikian, were acquainted with the ideas of Belinskii and other progressive Russian thinkers by reading their publications and reports in the press.

